

ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ
ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արդի հայերենի հարակատար դերբայը, որ «արտահայտում է ավարտված վիճակի գործողություն կամ եղելություն, երբեմն՝ հետևանքի հարատևության իմաստաբերանգով»¹, հին հայերենում որպես այդպիսին գոյություն չի ունեցել: Սակայն լեզվաբանների միաձայն կարծիքով գրաբարն ունի -ած, -ուած ածանցով բառեր, ինչպես՝ *հատուած, արարած, արկած, ասացուած, շինուած* և այլն: Հայ լեզվամտածողությամբ այս վերջավորությամբ բայերը գոյականական-ածականական ընկալում ունեն, ինչպես՝ Անդի մերթյո ջուրցն հրամայեաց լինել *կազմածոյն յորինուածոց արարածոց* (Ագաթ., տես «ՀԼՊԶ», էջ 124): Հարցը լավագույնս ուսումնասիրել է Ա.Աբրահամյանը իր «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Ե., 1953) աշխատության մեջ և նկատել է «Նոր Հայկազեան բառարան»-ում և «Առձեռն» բառարանում նշված վերջավորությամբ նաև բայական իմաստ արտահայտող բառեր: Դեռևս միջին հայերենի վաղ շրջանից հարակատարը ձևավորվել էր իբրև անկախ, ինքնուրույն դերբայ՝ *-ած* մասնիկով, ինչը, ըստ քերականների² գնահատության, գրաբարում հանդիպող բայանունների, բայածականների *-ած-ուած* ածանցն է: Հասկանալի է, որ թեև գրաբարում այսպիսի ձևերի գործածությունը *եմ, լինիմ* օժանդակ բայերի կողքին իբրև բաղադրյալ ժամանակների դեռևս չի գիտակցվում, սակայն, աստիճանաբար օրինաչափ դառնալով, առաջացնում է բաղադրյալ ստորոգյալ: Ավելի ուշ, երբ վերևի ձևերը գնահատվում են որպես դերբայ, նշված կառույցները վերլուծական ժամանակների վերաճելու ներուճակություն են ձեռք բերում: Այսինքն՝ լեզվում մասնակի բայական կիրառություն ունեցող *ած, ուած* ձևը, վերածնվելով հին անցյալ դերբայի կաղապարի հիմքի վրա, միջին հայերենում բարձրանում է քերականական ընդհանրական արժեք ունեցող երևույթի մակարդակի, ինչպիսի երևույթը բնորոշ է հայոց լեզվի պատմությանը: Հարակատարի իմաստը գրաբարում արտահայտվում էր անցյալ դերբայով (այն իր մեջ սերտորեն համատեղում էր վաղակատարի և հարակա-

¹ Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 370:

² Գ. Զահուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը, «ՊԲՀ», 1994, N1-2, այլև 1995, N1, Ս. Համբարձումյան, Հայերեն Աստված բառի ծագումն ու տիպաբանությունը, Ե., 2002, էջ 26-27:

տարի իմաստներ) և *եմ* օժանդակ բայով, ինչպես նաև *լինիմ* բայով կառույցների միջոցով ինչպես՝ Ապա աստ կինն ցայրն իւր. «Ռ՛ջ դու երեխայ էիր, և *էիր մկրտեալ* (=մկրտված էիր) (Բուզ., VI, Ը), ...գոր ինչ խնդրեցերն երթ *տուեալ լիցի* քեզ (ն.տ., ԺԶ)...

Գրաբարի անցյալ դերբայը լեզվի զարգացման հաջորդ փուլերում ունեցավ որակական տեղաշարժեր: Դեռևս միջին հայերենում կատարվեց դերբայական վերջավորության *եալ>ել³* (եր) անցում, իսկ դերբայի կիրառական (գործառական) հիմքի վրա ձևավորվեցին երկու դերբայներ՝ վաղակատարը և հարակա-տարը (վերջինս՝ ած մասնիկով): Անցյալ դերբայի մեջ համատեղված վաղակա-տարի իմաստն արտահայտվեց *եալ>ել* հնչյունափոխված դերբայածնի մեջ, իսկ լեզվական կիրառությունների հստակեցման հետևանքով արդեն իրապես տարրորոշված իմաստով հարակատարը ունեցավ իր դրսևորումը:

-*ած⁴* մասնիկով հարակատար⁵, ուրեմն և նրանով բաղադրված վերլուծական ժամանակներ գրաբարը չունի՝ ի տարբերություն հայերենի զարգացման հաջորդ փուլերի. այս իմաստով նրանց տարբերությունը չափան է: Հարակատարով եղանակային ձևի առանձին դեպք նկատել է Ա. Այտընյանը Հովհան Մամիկոնյանի (VII դար) «Պատմութիւն Տարօնոյ» (Կեն., 1832թ.) գրքում. «... և ի նոյն իննականեան վանս *էր գրած*» (էջ 59): Ս. Անթույանի կարծիքով՝ հավանաբար այս կիրառությունը հետմամուտ է, այլապես այն միջին հայերենի շրջանի ձևերին հավասար արժեք է ներկայացնում⁶: Իսկ միջին հայերենի վաղ շրջանից արդեն ազատ գործածական են թե հարակատար դերբայածներ, ինչպես՝ ...առաւաւտուն գտան ըզՏաճատն *սպաննած* (ՊԱԶ, 145), թե խոնարհված ձևերի բազմաթիվ կիրառություններ, ինչպես՝ ...և իմանաս

³ *ել + լինիմ* բայ կառույցներն արտահայտում էին հարակատար ժամանակի իմաստ, ինչպես՝ Որ երկու կին լինի առել, և այլ ի քախանայութիւն չկարէ հասնիլ բնաւ (Շու. Շալ., 61), Դեռ կինն *լիցի գիտեցել*... (ՄՀԶԱ., 65): Հարակատար դերբայ+*լինիմ* բայ նոր կառույցները ավելորդ դարձրին վաղակատարով նշված ձևերի գործածությունը: Սրա մասին Հ. Աճառյանը նկատում է. «Հայերենի բարբառներից ոչ մեկը չի ստանում *ել* ձևի դերբայ: Դրանք ներկայացնում են անցյալի 20 ուրիշ բաղադրյալ ձևեր, որոնք բոլորը, կազմված են ած ձևով դերբայից» (Տե՛ս «Լիակատար քերականություն...», հ. IV Բ, էջ 228):

⁴ Հարակատարը ձևավորվում է նաև *-ուկ* մասնիկով, որով և օժանդակ բայով զուգորդությունները կիրառված են առավելապես բարբառներում: Այժմ *-ած*-ով հարակատար դերբայի տարածումն կիրառությունը գրական լեզվում դուրս է մղում *ուկ* վերջավորությամբ կազմվող եղանակային ձևերին:

⁵ Ներ քերականության մեջ գոյություն ունեցող «հարակատար» հասկացությունը յուրովի ըմբռնելով՝ Ս. Աբելյանը անցյալ դերբայի միայն *-ած* վերջավորությամբ ձևը կոչեց հարակատար: Իսկ իբրև ինքնուրույն դերբայ այն ճանաչվեց միայն XX դարասկզբին:

⁶ Սե՛ս «ՀԼՊԹ», հ. II, Ե., 1975, էջ 236:

զպատճառն... թե որպես *է հրամայած* (ՍԱՕՐ⁷, էջ 6)... Այս շրջանում հարակատարով կազմվող վերլուծական ժամա-նակներում որպես օժանդակ բայ հանդես են գալիս առավելապես *են, լինիմ* բայերը: 1. *Եմ* պակասավոր բայը հարակատար դերբայի հետ կիրառվելով՝ կազմում է երկու ժամանակ՝ ա) *Սահմանական եղանակի հարակատար ներկա*, ինչպես՝ ...ասացին, թե *սպանած է* (ՊԱԶ, 141), բ) *Սահմանական եղանակի հարակատար անցյալ*, ինչպես՝ Եւ այս հանչաք *էր գրած* ի կանոնքն և այլ առաջ *չէր գնացած* (ՍԳԴ⁸, 38-39): 2. *Լինիմ + հարակատար դերբայ* կառույցը վերլուծական ժամանակների կազմության մյուս եղանակն է. այս դեպքում հարակատար դերբայը մնում է անփոփոխ, իսկ համապատասխան ժամանակներում հանդես են գալիս *լինել* բայի խոնարհված ձևերը՝ կազմելով երկրորդական վերլուծական կոչվող ժամանակներ, ինչպես՝ ի քաղցր ջրէն *կալած լինի* (ՄՅԶՄ, 34): 3. Ած-ով հարակատարը դիմավոր ձևեր է կազմում նաև *կամ և ունիմ* բայերով, ինչպես՝ Ղազարն *կայր* յիմ դուռս *անկած*, Ու չասացի թով *կայ նեղած* (Ֆ., 75), որ ի ներքստ *պահած ուներ* (ՄՅԶՄ, 39): Միջին հայերենում խոսակցական լեզվի ազդեցությունը բավականին նկատելի է արձանագրություններում, հիշատակարաններում, ինչպես՝ ...որ չառնէ, յեկեղեցոյս *կապած է...* համել ջանայ յեկեղեցոյս *նզոված են* (ՂԳՎ, 3, 122, 1073թ.), Եւ զաթոռին հարկն որ յետ ի չարաց *դրած էր* (Ս.տ., 1, 1, XIII դար):

Լինիմ բայի հետ հարադրվելիս ևս ներգործական սեռի բայերը կրավորական իմաստ են արտահայտում, ինչպես՝ Թէ այրն *լինի* ծառայ *տարած* (=տարված է լինում կամ լինի), նա կինն է տարի համբերտ (Շո. Շյա., 48), իսկ բանին փոխանն զարեջուր տուր, յոր *եփած լինի* կենդանի խաչեխար, որ ի մանր և ի մծե ճան-կերոյն *սրբած լինի և լուացած լինի* աղէկ քաղցր ջրով և աղով և *քնքիւած լինի* (ՄՅԶՄ, 43) և այլն: Միջինհայերենյան այս երևույթը պահպանված է հայերենի շատ բարբառներում⁹ և գրական արևելահայերենում, ինչի հանգամանալից քննությամբ Ա. Աբրահամյանը նկատում է, որ «հայերենի բարբառները և գրավոր լեզվի շրջանները առանձնանում են երկու խմբերի մեջ, որոնցից առաջինում¹⁰ հարակատար դերբայով և օժանդակ բայով կազմվող բաղադրյալ ժամանակներում հարակատար դերբայը սովորաբար ներգործական սեռի չի լինում, այլ լինում է կամ չեզոք սեռի, կամ

⁷ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940:

⁸ Ս. Գունդստաբլ, Ղատաստանագիրք, Էջմիածին, 1918:

⁹ Արարատյան, Թիֆլիսի, Ջուղայի, Ուրմիայի, Աստրախանի և այլ բարբառներում:

¹⁰ Առաջին խմբի մեջ դասավորված են նշված բարբառները, ինչպես նաև միջին հայերենը և գրական արևելահայերենը: Տես Ա. Աբրահամյան, *Նշվ. աշխ.*, էջ 370-373:

կրավորական»¹¹ (ընդգծումը հեղինակինն է - Ա. Ս.): Այսպես՝ Ինչ որ խոսում էր, հենց իմանաս՝ թե ավետարանի կողքին *գրած ըլի* (Աբ.¹², 24) - Արարատյան բարբառ, Քանաքեռ), Իշխաններն... ճարերն *կտրած* (=կտրված) *ստիպած են ըլում* (=ստիպված են լինում) գործ դնել Սայաթ-Նովու հոգեզվարճ խոսքն (Ախվ.¹³, 18) - Թիֆլիսի բարբառ)... Գրական արևելահայերենում ևս ի սկզբանե ներգործական սեռի բայերի հարակատարը անգամ առանց սեռանիշ *վ* ածանցի կարող էր կրավորականի իմաստ արտահայտել. ինչպես՝ կհայտնվի մի ծածկված պատգարակ, որը ... *պատած կլինի* սգավոր սև պատառ-ներով (Ր.Ս.¹⁴, 423), Հայաստանի ականաւոր մարդիկը *շողկապած են եղել* իւրեանց ականավոր մատենագիրների հետ (Շահ., 230): Դա բացատրվում է այդ դերբայի առանձնահատուկ նշանակությամբ. կրավորական սեռի բայերում առավել լավ է արտահայտված գործողության ավարտունությունը, ինչն էլ հենց համընկնում է հարակատար դերբայի իմաստին: Սակայն սակավաթիվ դեպքերում եղանակային ձևերում հարակատարը կարող է լինել հենց ներգործական սեռի կիրառությամբ. սրանց առանձնահատկությունն այն է, որ հարակատար ձևի մեջ արտահայտվում է վաղակատարի իմաստ, և *հարակատար դերբայ + օժանդակ բայ* կառույցն ունի *վաղակատար դերբայ + օժանդակ բայ* հարադրության քերականական նշանակություն, ինչպես՝ ...ես նույնպես *վայելած եմ* այս բնության զվարթարար պարզեր (Նալբ., 568), Չեղքին *բռնած էր* մի կակուղ կանաչագույն գլխարկ (Շիրվ.- Շ. և ուրիշ., 153), Ավերակը... որքա՛ն... դեպքերի հանդիսատես *էր եղած*... (Սուր. - Շ. և ուրիշ., 568):

Լինել բայով վերլուծական կառույցում ներգործական սեռի իմաստ ունեցող հարակատար դերբայը երկրորդական վերլուծական ժամանակների կազմում ևս պահպանում է իր սեռի իմաստը, թե միջինհայերենյան, թե լեզվի հետագա շրջաններում, ինչպես՝ Բայց թե փեսայ *լինի առած* ի տուն... (Շո. Կշ., 108), Եթե ոսկի կամ արծաթ *լինի կորուսած* ու... երդնու որ իւր է... (177)... Իսկ կրավորական և չեզոք սեռերի բայերի հարակատար կիրառությունները միջին հայերենից սկսած կիրառվում են մինչև մեր օրերը, ինչպես՝ Ի՞նչ առնեմ ես այս գերիս, որ *խաբած եմ* յառօրէիս (Կեչ.¹⁵, 37), Սիրտդ *լըցած է* նենգութեամբ՝ գերդ գազանի (Ֆ., 34), Երբ մենք աշակերտ էաք աստուծոյ՝ Ադամ *չէր ստեղծած*... (ն.տ., 87), Չորս կողմի կանգնածները ձենը չեն լսում,

¹¹ Տես նույն տեղում, էջ 367:

¹² Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Ե., 1948:

¹³ Գ. Ախվերդյան, Նամակներ, Ե., 1964:

¹⁴ Րաֆֆի, Սամվել, Ե., 1984:

¹⁵ Խ. Կեչառեցի, Տաղեր, «Հայ քնարերգություն» մատենաշար, Ե, 1988:

ենքան *կտրած է լինում* (Թում.¹⁶, 377): Երբեմն միևնույն նախադասության մեջ գուգահեռ կիրառված են և անցյալ դերբայը, և հարակատարը՝ ...զան ժողովին յամեն կողմանց, ուր *հալածեալ են և ցրուած* (Ն.Շ.¹⁷, 202): Նոր գրական հայերենում *որոշված է, գրված են, մեռած էր* և այլն սովորական գործածություններ են: Ուշագրավ է, որ արդեն միջին հայերենի երկրորդ շրջանում ներգործական սեռի բայերի հարակատարով և օժանդակ բայով վերլուծական ժամանակների բազմաթիվ կիրառությունների կողքին (Ըզնա ճորով *է տարած*, կամ *խաբած է* զինքն դրամով (Քուչ., 277), Դու Նաղաշն է՞ր կսպանես, տեսնես թե քեզ ի՞նչ *է արած* (Հովմ., 341) միևնույն բանաստեղծության մեջ հեղինակը գործածում է և հարակատարով կառույց՝ վաղակատարի նշանակությամբ, և հենց վաղակատար դերբայով հարադրություն. ինչպես՝ *Ասել ես ...* զիր ուղարկիր՝ ... *Քրա՛ծ եմ*, զալում, զալում, *Սիրած եմ*, զալում, զալում (ն.տ., 334) և *Գրել եմ, կապելի՞*՝ սուրմայ բաղով (ն.տ.): Իսկ վերը նշված *-ուած* ածանցով գոյական-ածական ձևերում *ու(վ)* թեև հատկապես կրավորականի իմաստ չէր արտահայտում, սակայն *ած, ուած* կազմություններն ինքնին առավելապես կրավորականի իմաստով էին ընկալվում: Լեզվում աստիճանաբար որոշակի տարբերակում մտավ հիշյալ վերլուծական կազմությունների և դրանց կրավորական իմաստով կիրառման ձևերի միջև: Քերականական հարակեցման ճանապարհով *ուած* արդեն վերջավորությամբ ձևերը սկսեցին կրավորական իմաստով գործածվել թե դերբայական կիրառություններում, թե վերլուծական երկրորդական ժամանակներում:

Հետաքրքիր երևույթ է հարակատար ձևերի գործածումը Ա. Աբրահամյանի նշած երկրորդ խմբի մեջ մտնող բարբառներում¹⁸ և գրավոր լեզվի տարբեր շրջաններում. այս խմբի բարբառների համար օրինաչափ է այն, որ ներգործական սեռի նշանակությամբ հանդես եկող հարակատարով վերլուծական կառույցներում արտահայտվում է վաղակատար դերբայի իմաստ. հարակատար ներկա ժամանակաձևը համապատասխանում է վաղակատար ներկային (բերած եմ = բերել եմ), հարակատար ներկան՝ վաղակատար անցյալին (բերած էի = բերել էի): Իսկ չեզոք և կրավորական սեռերի, այլև կրավորածն չեզոք բայերի հարա-կատարով և *եմ* բայով զուգորդված ժամանակները համապատասխանաբար արտահայտում են միաժամանակ այժմյան և վաղա-

¹⁶ Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, 1978.

¹⁷ Ն. Շնորհալի, Երգեր, «Հայ քնարերգություն» մատենաշար, Ե., 1982:

¹⁸ Ազուլիսի, Ղարաբաղի («Ուն» ճյուղ), Արթվինի, Կարճասնի, Շաղախի, Սեդրու, Հադրուքի («Ա» ճյուղ) և «Կը» ճյուղի գրեթե բոլոր բարբառներում, նաև գրական արևմտահայերենում (իմմտ.՝ Ա. Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 370):

կատար, և հարակատար ժամանակների իմաստներ, ինչպես՝ Կճուճին հովը *մփած այ* (եփած է = եփվել է և եփված է (ՍԱԲ, 35) - Ագուլիս, Շենը *ծկված ք լա* (=ծածկվել է և ծածկված է եղել) թօմբան քմակեն (ԱՂ, ՀԲՄՆԾ, 105) - Մեղրի և այլն:

Գրական արևմտահայերենում ևս հարակատար դերբայը զուգորդվում է ինչպես *եմ/էի*-ի, այնպես էլ *լինել*-ի շարքերի հետ՝ մտնելով հարացուցային ոլորտ, ինչպես՝ Այն հիմար ծանրությունը..., չեն գիտեր ի՞նչու, *զգեցած եմ* այս գիշեր (ԳԶ, 390), Դեզերով լեռ *եմ շինած* (ԴՎ.), Գարեգին առտուն կանուխ *իջած էր* խանութ (ՏԿՎԱ, 79)... Փաստ է, որ ներգործական և չեզոք սեռի բայերի հարակատարով արտահայտված են վաղակատար ժամանակներ, թեև արևմտահայերենն ունի հենց վաղակատարով զուգորդված վերլուծական ժամանակներ՝ ...մազերուն ստվար խուրձը *քակեր ու ձգեր էին* ուսերուն վրա (ԳԶ, 159), տախտակները չփած *են եղեր* (Պ, 376)... Սյուն կողմից կրավորական և կրավորակերպ չեզոք սեռի բայերի հարակատարով կառույցները կարող են արտահայտել և վաղակատարի, և հարակատարի իմաստներ միաժամանակ: Այսպես՝ Այն սրահները ուր իշխանուհիներու բեհեզեայ շրջագզեստները պտըտած են, *ծածկուած են* հողով (Զ.Եսայան)¹⁹, Բայց ծաղիկով *չէ եզերուած* փառքի ճամբան (ՎՎ, 85)... Ըստ հաշվումների²⁰ հարակատար դերբայով ձևերի գործածության դիմաց արևմտահայերենում ներգործական սեռի բայերի կիրառության հարաբերությունն է 1.5:1՝ հոգուտ վաղակատար ձևերի: Արևելահայ գրական լեզվի հարակատարի հետ էական ընդհանրություններով համդերձ արևմտահայերենում հարակատար դերբայի և *լինել*-ի շարքի կազմած հարացույցը ունի մասնակի տարբերություններ, ինչպիսին է ներգործական սեռի հարակատարի զուգորդումը *եմ/էի* խմբի հետ, ինչպես՝ ...ինձի գլխու ցավ *չտված չեն ըլլար* (Պ., 368), Քանզի նույն իսկ եթե *ըլլաս* Ամպին ետևն ալ *պահված*՝ Ես կը հասնիմ անկասկած (ՍԵԾ., 343) և այլն: Եթե XIX դարավերջի արևելահայ գրական լեզվում գլխավոր բաղադրյալ կոչված ժամանակներում գործածվում էին ներգործական սեռի, այդ թվում և պատճառական բայեր՝ Միտը չէր գալի, թե... *տեսած ա*, պապերիցն էլ *չէր լսած*... (Պո, 112), ...զեղեցիկ հակադրություն էր կազմում թագուհու քնարանը, որ *բռնած էր* սենյակի աջ անկյունը (Մուր., էջ 28), ապա, ի տարբերություն գրական արևելահայերենի այս փուլի և արևմտահայերենի ընդհանրապես, արդի արևելահայ գրականում

¹⁹ Տես Հովհ. Գազանճեան, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ.Պոլիս, 1924, էջ 185:

²⁰ Տես «ՀԼՊԲ», հ. II, Ե., 1975թ., էջ 241-242:

նշված սեռի բայերով ժամանակներ չեն կազմվում, մինչդեռ կրավորակերպ չեզոք և կրավորական սեռի հարակատար դերբայով հարա-դրությունների կիրառությունները, ինչպես և երկրորդական վերլուծական (բաղադրյալ) ժամանակները սովորական են արևելահայ գրողների երկերում դեռևս XIX դարից և աշխույժ կիրառություն ունեն մեր օրերում, ընդ որում ընդգծեմք, որ երկրորդական վերլուծական (բաղադրյալ) ժամանակների կազմության մեջ հանդես է գալիս ցանկացած սեռի բայի հարակատար ձև, ինչպես՝ ...տառապանքին պատճառ եղած չլինիք (Նալբ., 563), ...սենյակները... պատեֆոնի երգով ծայնավորած է լինելու (Յ. Սաթևոյան)²¹, ...ծեռնարկումները պետք է լինեն գիտականորեն հիմնավորված (Ազգ)²²...

Հարակատար դերբայ + եմ/էի շարք հարադրությունների մասին հայերենագիտության մեջ տարակարծություններ են եղել²³ հարակատար ժամանակները բնավ ժամանակային ձևեր չհամարելու²⁴ և հայերենի խոնարհման համակարգից դուրս բերելու մասին և ընդհակառակն²⁵: Պատճառը հարակատարի մեջ բայի և ածականի, երբեմն նույնիսկ գոյականի իմաստների համա-տեղումն է, այսպիսով էլ՝ նշված կառույցներով ժամանակային ընկալման թուլացումը: Որ արևելահայերենում, ի տարբերություն արևմտահայերենի, հարակատար ժամանակաձևերի կազմության որոշակի սահմանափակվածություն է առկա, պատճառը մաս բացատրելի է ներգործական և կրավորական սեռերի դրսևորած գործողությունների բնույթների տարբերությամբ: Վիճահարույց հարցի լուծումը միանշանակ չէ. է. Աղայանը և Յ. Բարսեղյանը դպրոցական բերականության մեջ («Հայոց լեզու», ե., 1965) խնդիրը ներկայացնում են նախ վերապահմամբ, այնուհետև («Հայոց լեզու», ե., 1974) հարակատար ժամանակները հանում են բայի խոնարհման հարացույցից: Ըստ Գ. Ջահուկյանի՝ ած-ով ձևերը մտնում են խոնարհման համակարգի մեջ²⁶: Ս. Ասատրյանը, վեճի պատճառ համարելով հարակատար դերբայի երկակի բնույթը, բնական է

²¹ Տե՛ս «Գրական թերթ», 2 / VI. 2000թ., N 1:

²² Տե՛ս «Ազգ», 28 / VIII, 1999թ., էջ 6:

²³ Ստ. Լիսիցյան, ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը, ՊՀԳԱ, հ 19, 1941, էջ 479:

²⁴ Նշված ժամանակները համարվում են որակողական (պրոցեսային) ստորոգյալ, ինտևաբար և բաղադրյալ ստորոգյալ (ամաչկոտ է, գրող է), այսինքն՝ բառակապակցություն և ոչ թե բառի վերլուծական ձև: Տե՛ս Յ. Ասմանգուլյան, Հայերենի բայի խոնարհման ձևերի համակարգի շուրջը, «ՊԲՀ», 1963թ., N 2, էջ 151-162:

²⁵ Տե՛ս Յ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, ե., 1953, էջ 31-316, Ա. Մարգարյան, Հարակատար ու անցյալի հարակատար բայական ժամանակներ են, «ՊԲՀ», 1964, N 2/25, է. Աղայան, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, «ՊԲՀ», 1963, N 3, նույնի ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, ե., 1967, էջ 348-356, 360, 369:

²⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, է. Աղայան և ուրիշներ, Հայոց լեզու, ե., 1980:

համարում նրանով և *եմ-էի* օժանդակ բայով կազմված կառուցվածքների նույն իսկ երկվական էությունը, եթե ուշադրություն դարձնենք հարակատարի արտահայտած բայական, գործողության նշանակությանը, հարակատար ժամանակները եղանակային ձևեր կհամարվեն, իսկ *հարակատար + եմ/էի* կառույցներում հարակատարի արտահայտած հատկանշային նշանակությունը շեշտելու դեպքում հարակատար ժամանակները կհանվեն խոնարհման հարացույցից: Վերլուծական այս ժամանակների արտահայտած մեկ կամ մյուս նշանակությունը չանտեսելու ցանկությամբ հանդերձ՝ Մ. Ասատրյանը հակված է դրանք առավելապես հանելու, քան թե թողնելու բայի խոնարհման հարացույցում²⁷: Սակայն հարակատար ժամանակաձևերը ներդաշնակվում են սահմանական եղանակի մյուս վերլուծական (բաղադրյալ) ժամանակներին՝ վաղակատար և ապառնի դերբայների հետ կազմելով եռանդամ հակադիր հարացուցային շարքեր, ինչպես՝ *քննվել է, քննված է, քննվելու է, համոզվել էր, համոզված էր, համոզվելու էր*: Զուգորդվելով *եմ/էի* և *լինել* օժանդակ բայերի հետ՝ հարակատարը մասնակցում է դիմավոր (եղանակային) ձևերի կազմությանը, ըստ այդմ՝ ստեղծվում են ոչ տևական-տևական՝ կերպային հակադրություններ՝ կանգնած եմ - կանգնած եմ լինում, կանգնած էի - կանգնած էի լինում: Այն, որ կերպային ներդաշնակության պահանջով հակադրության առաջին եզրում ներգործական ձևը դրսևորվում է վաղակատար դերբայով՝ կերել եմ – կերած եմ լինում, բերել եմ – բերած եմ լինում, համաձայն Դ. Պետրոսյանի նկատառման՝ միաժամանակ նշանակում է, թե հարակատարն ունի հարացուցային պլան²⁸: Ընդունված է մեկ այլ նկատառում. ի տարբերություն այլ կերպաժամանակային դերբայներով կազմված հարացուցային ձևերում օժանդակ բայի ժխտականի՝ դերբային նախորդող դիրքի և երրորդ դեմքում չէ>չի անցման (կարդում է>չի կարդում)՝ հարակատար + օժանդակ բայ կաղապարմամբ ստորոգյալը մոտ է անվանաբայական ստորոգյալի կազմությանը (քնած էլլքնած չէ և արթուն էլլարթուն չէ): Այսպիսի երկվությունը, որ բացատրվում է հարակատարի նաև վիճակային լինելով, բավարար հիմք չէ, սակայն, նշված կաղապարով ձևերը բայական համակարգի հարացույցից լիովին դուրս թողնելու: Ինչպես նկատում է Դ. Պետրոսյանը, «Վիճակահետևանքային ուժեղ նստվածքով պետք է բացատրել նաև այն, որ ներգործական հարակատարը ստորոգական պլան չունի. չի զուգորդվում *եմ/էի* խմբի հետ, հարացուցային շարք չի մտնում. *լինել*-ի հետ կազմում է վերլուծական

²⁷ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1983:

²⁸ Դ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 372:

անորոշ դերբայ՝ գրած լինել. փոխադրված լինել»²⁹: Ասվածից հետևում է, որ քանի որ կրավորական սեռի ցույց տված դրության, վիճակի իմաստը համահունչ է հարակատար ժամանակների իմաստային կողմին, ապա կրավորական, մասամբ և չեզոք սեռի բայերով կազմված հարակատար վերլուծական կառուցվածքները ազատորեն կիրառվում են ժամանակակից հայերենում՝ այսօր գոնե դիտվելով բայի եղանակաժամանակային ձևեր:

ՀԱՍՏՈՐՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- | | |
|----------------|---|
| ԱՂ. ՀԲԱՆԸ. | Ա. Ղարիբյան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Ե., 1939 (ՊՀԳԱ XI): |
| Բուզ. | Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912: |
| ԳԶ | Գ. Չոփրապ. Երկեր, Երևան, 1989: |
| Գրգս. | Գրիգորիս. Բնութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Ե., 1962: |
| ԴԴԿ | Դիվան հայ վիմագրության |
| ԴԿ | Դ. Վարուժան, «Զեղին սիրտը», Ե., 1991: |
| ՀԼ ՊԶ | Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Ե., 1975: |
| Հովն. | Ն. Հովնաթան, Հայ հին և միջնադարյան բնաբերգություն, Ե., 1986: |
| Մեծ. | Մ. Մեծարենց, «Զեղին սիրտը», Ե., 1991: |
| ՄՀԶՄ | Մխիթարայ Դերացւոյ Տերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832: |
| Նալբ. | Մ. Նալբանդյան, Երկեր, Ե., 1985: |
| Շահ. | Ս. Շահազիզեան, Հրապարակախոս ծայն, Մոսկուա, 1881: |
| Շիրվ. և ուրիշ. | Շիրվանզադե Ալ. և ուրիշներ, Պատմվածքներ, Ե., 1989: |
| Պ. | Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, Ե., 1964: |
| ՊԱԶ | «Պատմութիւն Սնանուն գրուցագրի», Ե., 1971: |
| Պռ. | Պ. Պոռչյան, Երկերի ժողովածու, հ. I, Ե., 1974: |
| ՍԱԲ | Ս. Սարգսեանց, Ազուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883: |
| ՎԿ | Վահէ-Վահեան, Մատեն սիրոյ եւ մորմոցի, Պլյուս, 1968: |
| ՏԿՎԱ | Տ. Կամսարական, Վարժապետին աղջիկը, Ե., 1956: |
| Ճ. | Ճրիկ, Տաղեր, «Հայ քնարերգություն» մատենաշար, 1982: |
| Շո. Շյա. | Շ. Chapanet, Сызбеник, Е., 1958. |

²⁹ Տե՛ս նույն տեղում: